Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻ «ԲԻԲԼԻԱԿԱՆ «ԱՐԱՐԱՏ ԵՐԿԻՐԸ» ԸՍՏ ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՀՈԴՎԱԾԻ ՍԱՀԻՆ

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հեղինակը գտնում է, որ «Աստվածաշնչում» հիշատակված Արարատ երկիրը, որտեղ ապաստան էին գտել Ասորեստանի թագավոր Սենեքերիմին սպանող իր երկու որդիները, Շուպրիան չէ, ինչպես, իբրև թե, սխալ ենթադրում են Բ. Բ. Պիոտրովսկին, Ի. Մ. Դյակոնովը, Ս. Տ. Երեմյանը և Գ. Ա. Մելիքիշվիլին: Վերջիններս դիտեին, որ տվյալ Արարատ երկիրը Ուրարտուն է: Սակայն նրանք նշում են, թե Շուպրիան մ.թ.ա. 714 թ. սկսած Ուրարտուի կազմից դուրս էր գտնվում: Բաբելական «Ժամանակագրության» մեջ նշված է, որ Սինախերիբին իր որդիները սպանել են: Դա համընկնում է մ.թ.ա. 681 թ. դեկտեմբեր ամսի հետ: Իսկ նրա կրտսեր որդի Ասարխադդոնը, ժառանգելով հոր գահը, մ.թ.ա. 673 թ. ձեռնարկում է արշավանք գեպի Շուպրիա, ըստ իր վավերագրերի, մարդասպաններին բռնելու նպատակով: Այդ ժամանակ նա Ուրարտուից այդ երկիր ապաստանած փախստականներին վերադարձնում է Ռուսա II-ին, որն իր բարեկամն էր:

Այս բոլորից ելնելով, նշված մասնագետները եզրակացնում են, թե հեռավոր Պաղեստինի գրիչը Շուպրիան, որն այդ ժամանակ Ուրարտուի կազմի մեջ չէր, մտցրել է Ուրարտու ընդհանուր հասկացության տակ: Իսկ հոդվածագիրը մասնագետներին մեղադրում է փաստերի հիման վրա արած այս ճշգրիտ եզրահանգումների համար:

Ավելին, հեղինակն անտեսում է Մովսես Խորենացու այն վկայությունը, ըստ որի Սկայորդին Սանասարին բնակեցնում է Հայաստանի հարավ-արևմուտքում՝ Սիմ լեռան մոտ: Իսկ հետագայում հայոց թագավորների կողմից նրա սերունդից Արգամոզանին գավառներ են տրվում երկրի հարավ-արևելքում: Նրանից էլ սերում են Արծրունիները և Գնունիները: Դա տեղի է ունեցել Ուրարտուի կործանումից շատ առաջ, երբ Վասպուրականի այդ երկու համանուն գավառները գտնվում էին Հայաստանի կազմի մեջ: Ս. Տ. Երեմյանն այդ մարզերը իր քարտեզներում տեղագրում է նշված տարածաշրջանում: Սակայն Դ. Սարգսյանը մեղադրում է վերջինիս, որ նա նշված գավառները տեղագրում է Շուպրիա երկրում:

Դ. Սարգսյանի հոդվածը, բացի այս երկու սխալ գրույթներից, հարուստ է այլ անճշտություններով, որոնց կարիք չկա մանրամասն անդրադառնալ: Այն որևէ նորություն չի պարունակում, ուստի արժանի չէ հրատարակության: